

Կապանի օդանավակայանի վերագործարկումը նախատեսվում է ավարտին հասցնել հունիսին. Վահե Հակոբյանի հարցազրույցը «ԱՐՄԵՆՊՐԵՍ» գործակալությանը

Կապանի օդանավակայանի վերագործարկման աշխատանքը նախատեսվում է ավարտին հասցնել այս տարվա հունիսին: Արդեն գնվել է չեխական L-410 ինքնաթիռը, որը մարտին կլինի Հայաստանում: Այս մասին «Արմենպրես»-ի հետ հարցազրույցում նշեց Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը՝ ներկայացնելով ընթացիկ տարվա ծրագրերը:

-Պարոն Հակոբյան

2017 թվականն, ընդհանուր առմամբ, ինչպիսի՞ տարի էր Սյունիքի մարզի համար ի՞նչ կարևոր ձեռքբերումներ կառանձնացնեք:

-Գիտեք, միշտ դժվար է օբյեկտիվ գնահատական տալ քո և քո թիմի աշխատանքին և, երևի, այս պարագայում ճիշտ կլինի զերծ մնալ ինքնագնահատականից, այլ պարզապես թվարկել փաստեր՝ թողնելով գնահատականի իրավունքը հանրությանը: Այսպիսով, առաջինը, ինչ կցանկանայի առանձնացնել, Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամի ստեղծումն էր, ինչի շնորհիվ կյանքի կոչվեցին մարզը մի շարք ուղղություններով զարգացնելու նախագծեր: Դրանցից ամենանշանակալին, իհարկե, Կապանի օդանավակայանի վերագործարկումն է, ինչը, վստահաբար, մեծ ակտիվություն կհաղորդի մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Հաջորդ կարևոր նախագիծը, որը կյանքի կոչվեց մարզում՝ Իտալական պիցցայի արտադրամասն էր, որն այսօր արդեն շահագործվում է և պատրաստվում է արտադրանքն արտահանել Իրանի Իսլամական Հանրապետություն և ՌԴ: Մարզկենտրոնում բացվեց բրենդային հագուստների մասնագիտացված խանութ. Այն Երևանից դուրս միակն է իր տեսակով հանրապետությունում: 2017 թվականին մեկնարկեց նաև միջազգային ստանդարտներին համապատասխանող կինոթատրոնի կառուցումը, որի աշխատանքներն, ի դեպ, մոտենում են ավարտին և մեծ ուրախությամբ պետք է նշեն, որ այն կգործի արդեն մոտ օրերս:

Մեզ նաև հաջողվել է 2017 թվականի ավարտին պայմանավորվածություն ձեռք բերել իտալացի մեր գործընկերների հետ մի նոր նախագծի շուրջ, որը մարզում կստեղծի մոտ 500 նոր աշխատատեղ: Խոսքը գնում է տրիկոտաժի նոր ֆաբրիկայի մասին: Իրականում դժվար է թվարկել ողջ կատարվածը մեկ հարցի շրջանակներում, բայց ամեն դեպքում ես նշեցի ամենաառաջնային նախագծերը, որոնք մեզ հաջողվել է կյանքի կոչել 2017 թվականի ընթացքում:

-2017 թվականի վերջին Սյունիքում բացվեց

«Արաս» ազատ տնտեսական գոտու գրասենյակը,

«Մեդրի» ազատ տնտեսական գոտին: Այս խոշոր նախաձեռնություններից ի՞նչ գ

արգացումներ սպասել

2018-

ին: Այդ համատեքստում Սյունիքի մարզի համար տնտեսական զարգացման ի՞նչ հեռանկարներ կան:

-Մեղրիում ազատ տնտեսական գոտու ստեղծումը կարևորվում է նրանով, որ գտնվելով Իրանի հետ սահմանագծին, այն կհանդիսանա լրացուցիչ խթան մեր երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների ակտիվացմանը, իրանական կապիտալով ընկերությունների ներգրավմանը և կամրապնդի ներկայումս առկա սերտ համագործակցությունը:

Ազատ տնտեսական գոտին ունենալու է ոլորտային մեծ ընդգրկվածություն՝ ներառելով գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, առևտրի, փոխադրումների և պահեստային տնտեսության, զբոսաշրջության և այլ ոլորտները:

Ինչպես նշեցիք, նախորդ տարվա դեկտեմբերին Կապանում բացվեց «Արաս» ազատ տնտեսական գոտու գրասենյակը, որն այս 2 ամսվա ժամանակահատվածում արդեն սկսել է ակտիվ գործել և հենց այս գրասենյակի իրականացրած աշխատանքների արդյունքում մոտ ժամանակներս սկսելու է գործել Ջուլֆա-Կապան և հակառակ ուղղությունով ավտոբուսային երթուղին: Պլանավորվում է օրական առնվազն մեկ երթևեկություն: Սա կնպաստի Սյունիքի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև տուրիզմի զարգացմանը, ինչպես նաև կստեղծի լավ հնարավորություն ապրանքաշրջանառության խթանման համար: Մենք 2018 թվականին նախատեսել ենք սերտ համագործակցություն Իրանի հետ գյուղատնտեսության ոլորտում (կաթիլային ոռոգում, սերմնաբուծություն, անասնաբուծություն և այլն): Նաև նշենք, այս պահին տարվում են բանակցություններ Հայաստանից Իրան պահածոներ և մեղր արտահանելու վերաբերյալ:

-Պարոն Հակոբյան,

2017 թվականն առանձնացավ մի կարևոր ծրագրով: Առաջին կիսամյակի վերջերից սկսվեցին Կապանի օդանավակայանի վերանորոգման աշխատանքները: Այս ուղղությամբ ի՞նչ աշխատանքների սպասել ընթացիկ տարում: Արդյո՞ք թռիչքների պարբերականության, տոմսերի գների վերաբերյալ հստակեցումներ կան:

-Օդանավակայանի վերագործարկման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել այս տարվա հունիսին: Մենք առավել քան վստահ ենք, որ ամենից զատ, օդանավակայանի առկայությունն աշխուժություն կհաղորդի մարզում իրականացվող ներդրումներին, քանի որ ներդրողը կկարողանա հեշտ և արագ՝ ընդամենը 35 րոպեում հասնել Կապան: Ինչպես արդեն տեղեկացրել էինք, արդեն գնվել է չեխական L-410 ինքնաթիռը, որը մարտին կլինի Հայաստանում:

Չվերթերի պարբերությունը, իհարկե, կախված կլինի պահանջարկից, այդ իսկ պատճառով այս պահին դժվար է հստակ ասել: Ավիատոմսի արժեքի վերաբերյալ պետք է նշեմ, որ բազմիցս ասվել է այն մասին, որ սա բիզնես նախագիծ չէ և չի էլ կարող լինել այդպիսին: Դա նշանակում է, որ թռիչքի արժեքը լինելու է շատ մոտ ինքնարժեքին, իսկ մի շարք դեպքերում՝ շնորհիվ Սյունիքի զարգացման և

ներդրման հիմնադրամի նախաձեռնության՝ տոմսի արժեքը սուբսիդավորվելու է (խոսքը գնում է առողջական և այլ անհետաձգելի պատճառներով շտապ Երևան մեկնելու կարիք ունեցող քաղաքացիների տոմսերի մասին):

-

Նախորդ տարին մարզի համար առանձնացավ մի շարք ներդրումային ծրագրեր ով: Այս տարի այլ ներդրումային ծրագրեր նախանշված են, որոնց կյանքի կոչմա մբ նոր աշխատատեղեր կստեղծվեն:

- Նախորդ տարին իսկապես առատ էր ներդրումային ծրագրերով և պետք է նշեմ, որ այդ ծրագրերի պտուղները մենք դեռ նոր պիտի սկսենք քաղել այս և հաջորդող տարիներին: Անշուշտ, մենք ունենք մի շարք նոր ծրագրեր, որոնք այս պահին ակտիվ քննարկման փուլում են, սակայն ես չեմ ցանկանա ներկայացնել դրանք չափազանց հում վիճակում: Վստահեցնում եմ ձեզ, որ մենք դեռ շատ առիթներ կունենանք փաստելու Սյունիքի շարունակական զարգացման ընթացքը:

-

Պարոն մարզպետ, թերևս, բոլոր մարզերում աղբահանության խնդիրը շարունակում է օրակարգային մնալ: Այս տեսանկյունից Սյունիքի մարզում ի՞նչ արդյունքների մասին կարող ենք խոսել և ընթացիկ տարում ի՞նչ աշխատանքներ են նախատեսված:

-Աղբահանության խնդիրը իսկապես օրակարգային է մեր մարզում ևս: Խոսելով այս ոլորտում մեր ունեցած առաջընթացի մասին՝ պետք է նշենք, որ 2017 թվականի ընթացքում մարզպետարանը համայնքների հետ համատեղ կատարել է ծավալուն աշխատանք՝ մարզում աղբահանության դիմաց վճարման պարտավորություն ունեցող անձանց բազաների ճշտման ուղղությամբ, ինչի արդյունքում ֆիզիկական անձանց թիվը զգալիորեն ավելացել է: Տնտեսվարող սուբյեկտների հետ պայմանագրերի քանակը նույնպես գրանցել է զգալի աճ և այսօր կազմում է շուրջ 1860 իրավաբանական անձ: Պետք է նաև նշվենք, որ նախորդ տարի մեկնարկել է աղբատեղերի բարելավման գործընթացը, որն ակտիվորեն շարունակվում է նաև այս տարի:

-

Մարզպետարանն ի՞նչ աշխատանքներ է նախատեսել զբոսաշրջության խթանման և զարգացման ուղղությամբ:

-Ինչպես գիտեք, զբոսաշրջությունն այսօր կառավարության կողմից տարվող քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից մեկն է: Նախորդ տարվա ընթացքում այս ոլորտի զարգացման ուղղությամբ մենք ձեռնարկել ենք մի շարք կարևոր քայլեր: Մենք խոսեցինք Կապանի օդանավակայանի վերագործարկման աշխատանքների մասին, ինչն այս կոնտեքստում առավել, քան արդիական է, քանի որ, վստահաբար, այն կունենա անգնահատելի ազդեցություն մարզում զբոսաշրջության զարգացման վրա: Երևանից Կապան ուղևորությունն այսօր տևում է առավել քան 4 ժամ և ճանապարհը բավականին բարդ է:

Սա չի կարող չազդել տուրիստի՝ մեր մարզի հանդեպ հետաքրքրության վրա, այնինչ շուտով այդ նույն ճանապարհը կհաղթահարվի ընդամենը 30 րոպեում, ինչը, կստեղծի աննախադեպ շահավետ պայմաններ ոլորտի զարգացման համար: Կարևոր է նշել նաև, որ 2017 թվականին իմ առաջարկությամբ և ՀՀ կառավարության որոշմամբ Սյունիքի մարզպետարանի կառուցվածքում կատարվել են փոփոխություններ, որով մարզպետարանի կառուցվածքում ստեղծվել է Միջազգային համագործակցության և զբոսաշրջության զարգացման առանձին ստորաբաժանում: Ստեղծված են նաև նպաստավոր պայմաններ մասնավոր ներդրողների համար և ուրախությամբ պետք է արձանագրենք, որ արդեն ներկայացվել են մի շարք ներդրումային ծրագրեր, ինչպիսիք են, օրինակ, մարզում առաջին զիփլայնի նախագիծը, էկո գյուղերի ստեղծումը, ինչպես նաև աշխարհում լայն տարածում ունեցող «Bed and breakfast» հյուրընկալման ֆորմատի զարգացումը մարզում: 2018 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, նախատեսվում է մարզում առանձնացնել և թիրախավորել շուրջ 30 զբոսաշրջային տարածք:

-

Պարոն մարզպետ, հաճախ զբոսաշրջիկներից, տուրիստական ընկերություններ ից դժգոհություն ենք լսում միջհամայնքային ճանապարհների վատ լինելու մասին: Այս տարվա ընթացքում ճանապարհաշինարարական ի՞նչ աշխատանքներ եք իրականացնելու:

-Իսկապես միջհամայնքային ճանապարհների բարվոք վիճակը խիստ կարևոր է մի շարք ոլորտների, այդ թվում նաև զբոսաշրջության զարգացման համար: 2017թ.-ին մարզում կատարել են բավականին ծավալուն կապիտալ շինարարական աշխատանքներ: Ամբողջովին ասֆալտապատվել են Հալիծոր – Բաղաբերդ- Ձորք թաղամասերը, Արավուսի կամուրջը և մի շարք այլ կարևոր օբյեկտներ: Համայնքները նույնպես մեծ աշխատանքներ են տանում այդ ուղղությամբ, այս տարի կապիտալ ծախսերը շատ ավելին են լինելու համայնքներում, քանի որ կառավարությունը մշակել է կապիտալ ծախսերի համաֆինանսավորման ծրագիր: Դեռ վաղ է խոսել ծրագրում ընդգրկվելիք կոնկրետ շինարարական օբյեկտների մասին, սակայն մեկ բան ակնհայտ է՝ այս տարին բավականին խոստումնալից է կապիտալ շինարարական աշխատանքների կոնտեքստում: Նշեմ, որ միջմարզային ճանապարհների շահագործման և պահպանման համար այս տարի նախատեսված է 161,1 մլն ՀՀ դրամ նախորդ տարվա 138մլն ՀՀ դրամի փոխարեն:

-

Այս տարվա ընթացքում կրթական հաստատությունների վերանորոգման, նորեր ի կառուցման ի՞նչ ծրագրեր կան նախատեսված:

-Կրթական ոլորտում անելիքներ շատ կան: Մարզում կա 118 դպրոց, որոնցից 112 մարզպետարանի ենթակայության տակ է: 2017թ.-ին վերանորոգվել են Մեղրիի թիվ 1, Սպանդարյանի, Սիսիանի թիվ 2, Հացավանի դպրոցները: Նաև հիմնովին փոխվել է Կապանի թիվ 1 դպրոցի ջեռուցման համակարգը: Այստեղ պետք է նշեմ և հատուկ շնորհակալություն հայտնեմ Զանգեզուրի պղնձամոլիբդենային

կոմբինատին, ում հետ համաֆինանսավորման արդյունքում այսօր լուծվել է թե՛ այս խնդիրը, թե՛ բազմաթիվ այլ խնդիրներ մարզում: Այս պահին շարունակվում են Կապանի թիվ 7 հիմնական դպրոցի վերակառուցման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսվում է այս տարվա տարա վերջում: Այս տարի նախատեսվում է կատարել վերակառուցման աշխատանքներ առաջնային լուծում պահանջող խնդիրներ ունեցող շուրջ 7 դպրոցներում: